

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻ 8

15 ԱՊՐԷԼ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օրուան Նամակներ	ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Ինչպե՞ս կը դասաւորուին Կոնֆուցիուսեան երկերը . . .	ԳՐ. ՄԱԼԽԱՍ
Էլիզ (Բանաստեղծութիւն)	Մ. Ա. ՊԱՐՅԱՄԵԱՆ
Մընաղներ	ՄԻՍԱԳ ՄԵԾԱՐԵՆՅ
Յիւստակի եջեր «Անթրական երազ»	ՀՐ. Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻ ՄԸ ՇՈՒՐՋԸ. - ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳՈՒՆԴ

ՇՐՋԱՆ ՄԱՅԻՆ ԳԻՊԻ ՊՐԱԶԻԼԻՍ

(ՏՕՔԹ. ԼԷՈՒՈԼ ՔԱՐԼԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դրո. եւ զաւառներուն համար յիսուն դրո., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 րուպի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Ձի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Ձեռն-ԲԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غنیه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575

15715575


15715575

15715575

15715575

Ծաղկաւոր թիւ

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելիէն դարձած է, ա՛յնքան բաղձաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լու ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն սմանք նշանաւոր են իւր ախորժակով եւ քաղցրաւոր, սմանք ալ թէեւ նոյնքան ախորժակի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իւր կաշտութիւն եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իր սւրոյն յաղակութիւններն ունի որոնք գինքը կը զանազանեն ուրիշ տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յաղակութեանց մէջէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համ, հաւ եւ մանաւանդ՝ կաշտութիւն եւ զօրացուցիչ ազդեցական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնի թէյը, որ այդ յաղակութեանց շնորհիւ կը յարմարի մէջն տարիքի ու կազմութեան, մէջն կլիմայի եւ եղանակի եւ մէջն ճաշակի:

Յապրուեալն եւ Իսպաղուլեան թէյի մեծ վաճառատունը, իր բաղձաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճաբոնական զուտ թէյ մասնաւոր եւ գեղեցիկ աւափերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփոքին ունենալ թէյ մը

Համալ, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ժափարի մանուշակ տեսակ թէյեր:

Ուսադուրիւն մարգալի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբուժ եւ կնիքաբան (gynécologue). Տօքթօր Էմիրզէ ար 15 տարեւան գործունէութեամբ մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յորդայ յաճախորդներուն թէ՛ բնականօրէն փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18. Բաց ի վերայիցեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթօաներով ջղային եւ հոգեկան ու երեւակայական մէջն տեսակ հիւանդութիւնները. ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչտի երեւի եւ սուրբաւ ագեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ Երիտասարդական մայիքները, ինչպէս նաեւ գինեմայիքը, մօրիֆնամայիքը եւ այլն: Կիրակիներէն զաւա մէջն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կրն. դունի. եւ սուրբօր օրերը ձիարար կը դարձանէ վկայեալ աղքատներ: 8-10

ՄԱՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵՆ

(Ն Ի Կ Ո Մ Ի Դ Ի Ա)

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ազգովազմութիւններ, մէջն տեսակ գոմիսեօնի գործեր, առեւտրական գործերու վերաբերեալ ազգայնական յանձնարարութիւնք՝ Կ. Պոլսոյ մէջ պատրաստելու. Զաւթարվիդի Եւային:

ԿԸ ՀԱՅԹԱՅԹԻ՝ ամսական վճարումով՝ Ստըպեհայ դաշտակներ, ազգական առեւտրական զանգեղներ. պիտիքներ եւ այլն: Ուղարկած քանակութեամբ եւ տեսակով՝ ընտիր ու հաւաքէա թէյեր:

Շրջակայ գաւառականներու առեւտրական յանձնարարութիւնք եւս կը կատարուին փութով:

Հասցէ

ՄԱՐԱՀԱՄ ԿՏԱԻՃԵԱՆ ԻՉՄԻՏ

ՀԻՒՆԴՈՒԹԻՈՒՆԷ ՎԵՐՋԸ՝ ԶՅՐՈՒԹԻՈՒՆ

Երբ տենդեր և երկայն հիւանդութիւններ և անհանգստութիւններ որոնք մարմինը տկարացուցած և ընդհանուր անորոշութեան մէջ ձգած են, ի հարկէ մարդո զօրացուցիչ բանի մը կարօտ է որ զինքը շուտմը կատարեալ առողջութեան հասցնէ:



SCOTT'S EMULSION

աշխարհիս մէջ առաջին կարգի զօրացուցիչ դեղ մըն է և իրեն հաւասարը չիկայ: Ասիկայ թէ անորոշակ կուտայ և թէ մաքուր սողութիւններ կը շտապէ. Մարմինը կը զարգացնէ և նոր հարուստ արիւն կուտայ, կենսաղբութիւններ կը վերականգնէ և հիւանդութեան դիմադրելու համար ընդհանուր դրութեան զօրութիւնն կուտայ: Ըսգօթի Բաղադրութիւններ թէ կերակուր և թէ դեղ է. և տկարացած դրութեան մը կարօտ եղած միս և զօրութիւններ առատապէս կը մատակարարէ, և ասոր անհամար օգտակար գործողութիւնները ստուգիւ զարմանալի են: Անտարակոյս մեծ վտանքի մէջէ դրութիւններ երբ միս և զաւալ կը կորսնցնէ և հետեւապէս շուտմը այնչափ կը տկարանայ որ հիւանդութիւններու դիւրաւ զոհ կ'ըլլայ:

ԸՍԳՕԹԻ ԲԵՂԵԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր կերակուրներու զօրութիւններ կը պարունակէ, այժի վատնումը կը դադարեցնէ և առողջատես միս կը կազմէ: Ընդ միշտ մարդագոյն փաթեթի մը մէջ և վրան այս պատկերով կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւնն ընել պէտք է:

25

Բոլոր պեղաբերները և դեղալեռները ին ծախեն:

PHOENIX ASSURANCE Ld. Co.

“Ֆ Ի Ն Ի Ք Ս,”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

ԵՎ ՊՈՐՏԻ Ի ՓՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊՈԶՈՂԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ և պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Յինիթս ոսկի հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ իր պատուաւորութեամբ և վնասուց մէջ իր անմիջական վնասումներով:

Յինիթս կ'ապահովագրէ հրդեհի և կայծակի դէմ մէկ անասկ անշարժ և շարժուն առարկանք, յոյժ նպատակը պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է. ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ և ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎԼԱՍՈՒՑ. Տարդ վնասած է առաւել քան 27,000,000 անգլ. ոսկի:

Ընդհ. գործակալ Պալա, և գաւառաց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ Վիքայիս խան, Պանգ. Օրօմանի մօտ Ղալաթիա:

Փոխ գործակալ Ի Պալա Ճիվալ Թէթեալ

8-10

Ֆնագլխան խան

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ԲԵՐՍ, ՄԵՐ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալաթա-Սերայի Լիսին դէմ
Դո. Սո. Շք. օրերը առաւօտեան կանուխ
խան մինչեւ իրիկուան Ժ. 11½
Բո. Դո. Ուր. օրերը 6հն մինչեւ 11½
Կիրակի օրերը Վալագրաբեանը

8-10

ՄԱՍԻՆ

55^{րդ} ՏԱՐԻ, Է. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 8

15 ԱՊՐԻԼ 1906

ՕՐՈՒԱՆ ՆՁՄԱՐՆԵՐ

Ազգ. Հիւանդանոցին տարեկան Նուազանդէսը, որ տեղի կ'ունենայ վաղը՝ կիրակի՝ Թէփէ—Պաշլի թաղապետական թատրոնին մէջ, այն գեղարուեստական—բարեգործական ցերեկոյթներէն է որոնք «ռէքլամ»ի պէտք չունին՝ յաջողելու համար։ Այն տաք վերաբերումը զոր հանրութեան ամէն դասակարգերը ինքնաբերաբար կը տածեն, աւանդական կերպով, Գթութեան այդ Յարկին նկատմամբ, եւ երաժշտութեան ճաշակը որ տարուէ տարի կը ծաւալի մեր մէջ, կարեւոր ազդակներն են Նուազանդէսին արդիւնաւորմանը, առանց անտես առնելու կարգադիր Մասնախումբին ջանքերը եւ Հոգաբարձութեան օժանդակութիւնը առայլ։

Այս տարի, երաժշտական յայտագրին պատրաստութիւնը ու Քօնսէնին արուեստագիտական կազմակերպութիւնը ստանձնած էին Գրիգոր Խան Շամտանճեան եւ Մարդէն էֆ. Յակոբեան որոնք երաժշտական գեղեցիկ պէսպիսութիւններով ու մեծ երգահաններու հեղինակութիւններէն ընտրեալազոյն հատուածներով կազմուած բաօկրամ մը կ'ընծայեն՝ ձայնական ու գործիական կերպով գործադրելի, մասնակցութեամբ Պ. Նավայի նուազախումբին, Օր. Քօմանի, Օր. Մուտու վաքի եւ խմբերգի մը։ Միեւնոյն ատեն, կարգադիր Մասնախումբը՝ Վսեմ. Մաքսուտ Սեպուհ պէյի նախագահութեամբ՝ տոմսակներուն սպառումը ու հասոյթին գոյացումը լայն սահմանի մը մէջ ապահովելու ջանք չէ խնայած, համակիր ընդունելութիւն մը գտնելով ամենուրեք՝ իր հրաւերին։ Այնպէս որ, շաբաթը զոր կը բոլորենք այսօր, Նուա-

զանդէսի շաբաթ մըն է մեր ընտանեկան լաւագոյն շրջանակներուն, առեւտրական ու սեղանաւորական դասին, գործի մարդոց ու գրչի մարդոց համար միանգամայն։

—Քօնսէնի պիտի երթա՞ք։

—Յայտագիրը տեսա՞ք։

Օրուան խօսակցութեան նիւթը, ասոնք կը կազմեն, ինչպէս գրասենեակներու մէջ՝ նոյնպէս ընտանեկան յարկերու տակ, Կոնսօին ու Մօձարդին վրայ կարծիքներով, գարնանային արդուզարդերու մասին տեղեկութիւններով, ու դեռ ուրիշ մանր՝ աննշան կարծուած պարագաներու վրայ հարցումներով, որոնց մէջ անխառն հաճոյք մը կայ։ Ընկերային դասակարգերու այս հետաքրքրութիւնը այլապէս կ'արտայայտուի անդին՝ Հիւանդանոցին մէջ, ուր իրենց մտքին դիտակցութիւնը չկորսնցուցած հիւանդներ, խելացի տղաքներ, իրիկուան սեղանին շուրջը բոլորուած կը փոփօսն իրարու. — «Վաղը մեր Քօնսէնը կը տրուի»։ Ու ժպիտ մը կը նկարուի իրենց տխուր դէմքերուն վրայ։ Այդ ժպիտը, վաղանցիկ այդ ուրախութիւնը տարաբաղդ պատասպարեալներուն, ընտանեզուրկներուն, հոգեկան միակ հաճոյքը, բարոյական միակ փոխարինութիւնն է ամէն անոնց որ կ'աշխատին Նուազանդէսին յաջողութեանը ու կը նպաստեն անոր։

Շաբաթը զոր բոլորեցինք, իր տրամուծեան բաժինն ալ ունեցաւ մեր համայնքին համար, պատկառելի եկեղեցականի մը անհետացումովը։ Մասիսի նախորդ թիւը մամուլին յանձնուած էր արդէն, ապրիլ 8ի ուրբաթ իրիկունը, երբ Տ. Բարթուղիմէոս

Սրբազան իր հոգին կ'աւանդէր, կաթնասե-
հիւանդութենէ մը ետք: Դոյժը տարածուե-
ցաւ նոյն գիշերն իսկ և յաջորդ առաւօտուն
յուզարկաւորներու ստուար բազմութիւն մը
կը խռնուէր Բերայի Ս. Երրորդութիւն եկե-
ղեցին, հանգուցելոյն դադաղին շուրջ: Հոն
էին բարձրաստիճան կիները, պաշտօնական
անձնաւորութիւններ, Պատրիարքարանի Ժո-
ղովականներ ու ամէն զաւակարգի ներկա-
յացուցիչներ՝ խորապէս ազդուած այս անա-
կընկալ մահէն: Ս. Պատրիարք Հայրը, որ
կը նախագահէր արարողութեանց, ինքնա-
բուխ ու պերճ դամբանականով մը պատկե-
րացուց Պրուսայի նախորդ Առաջնորդին
հանրային ու անհատական կեանքին յատկա-
նըշական գիծերը, բարեպաշտութիւնը, լրջա-
խոհութիւնը, եկեղեցական աւանդաւոր ոգին
ու բարեմասնութիւնները:

Դադաղը եկեղեցիէն հանուեցաւ հանդի-
սաւոր թափօրով մը որուն առջեւէն կը
տարուէր, թաւշեայ բարձիկի մը վրայ, առա-
ջին կարգի Մէծիտիէ պատուանշանը որով
պատուուած էր հանգուցեալը:

Թաղումը կատարուեցաւ Շիշլիի գերեզ-
մանատունը:

Կրկնութիւն մը պիտի ըլլար, մեր մասին,
կենսագրական ծանօթութիւններ հրատարա-
կել, զորս մանրամասն կերպով տուին ար-
դէն օրաթերթերը: Յիշենք միայն, թէ Տ.
Բարթուղիմէոս արքեպիսկոպոսի յիշատակելի
երկու պաշտօնավարութիւնները եղած են՝
Պրուսայի առաջնորդութիւնը, զոր վարած
է 27 տարիի չափ, և Պատրիարքական տե-
ղապահութիւնը՝ չորս ամսոյ չափ: Անկէ ի
վեր, գրեթէ մեկուսացած կ'ապրէր, այցե-
լելով միայն Բանկալթիի գերեզմանատան
Ս. Լուսաւորիչ եկեղեցին որուն փառքիկ ու
անշարդ երեւոյթը՝ հակադրութիւն մը կը
ներկայացնէր Չամչեան Սրբազանին հանդի-
սասէր ու փառաւոր եկեղեցականի խառ-
նուածքին: Բայց ինքը, հանգուցեալը, տե-
սակ մը հոգեկան սփոփանք, կրօնային կաղ-
դուրում կը գտնէր՝ այդ պարզուկ մատուոթին
մէջ արարողութիւն կատարելով, աղօթելով,
քարոզելով:

Հաւատարիմ՝ Պետութեան և ջերմեռանդ
իր եկեղեցիին ու տոհմային աւանդութեանց
գործընդոտ սէր մը ունէր Տ. Բարթուղի-
մէոս արքեպիսկոպոս ամէն բանի որ կը ծա-
ռայէր իր համայնքին օգտին ու բարեկա-
ութեանը՝ կրթական, կրօնային, բարեգոր-
ծական տեսակէտներով, և իր ձեռքէն եկա-
նոր և է աջակցութիւն չէր խնայեր: Նոյն իսկ
անհատական դիմումները, խնդրանքները,
որոնք կ'ուղղուէին իրեն՝ հայրական սիրալի-
ընդունելութիւն մը կը գտնէին, և կը ջանար
հնար եղածին չափ գոհացում տալ անոնց:

Ամէն անոնք որ մօտէն ճանչցած են հան-
գուցեալ Սրբազանը, — և պզտիկ թիւ մը են
կազմեր անոնք, — համակիր յիշատակ մը կը
պահեն անոր շահեկան ու փորձառական խօ-
սակցութիւններէն, մանրամէկերով համեմ-
ուած, սիրալիր վարմունքէն և ազնիւ հի-
րենկալութենէն:

Վերջին անգամ, անցեալ տարի, ներկայ
գտնուեցաւ Յովսէփ - Իզմիրեանց գրական
մրցանակաբաշխութեան հանդէսին ուր իր
երեւումը խոր տպաւորութիւն առաջ բերաւ,
— տպաւորութիւն մը՝ համակրանքով ու
կարեկցութեամբ խառն, վասն զի իր պարթև
հասակը արդէն իսկ սկսած էր կքիլ ո՛չ թէ
տարիներու բեռան՝ այլ հիւանդագին վիճակին
տակ: Յետոյ, քանի մը անգամներ, նշադ-
ուեցաւ յուզարկաւորութեանը ծանօթ անձ.
նաւորութեանց որոնց մտերմն էր:

Այս կիրակի օր, իր յուզարկաւորութենէն
ու թաղումէն քսանընթոս ժամ վերջը, երբ
քանի մը պաշտօնակիցներու հետ՝ այցելե-
ցինք իր բնակարանը, ցաւակցական այցե-
լութիւն մը տալու իր հոգեւոր զաւկին՝ Տ.
Արիստակէս եպիսկ. Վանքեանի և իր պաշտ-
պանեալին՝ Աղնիւ Տէք. Տէր—Ահարոնեանի ու
որուն վրայ հայրական գորով մը ունէր նոյն
պէս, սրտածմիրկ տպաւորութիւն մը կրե-
ցինք: Տունը լեցուն էր զաւգմութեամբ
վերնայարկը՝ կիներ որոնք կուլային տակա-
ւին, և վարը՝ այցելուներ որոնք իրարու կը
յաջորդէին անընդհատ: Եւ սակայն, այս
տխուր ոգեւորութեան ու երթեւեկներուն
հակառակ, ամայութիւն մը կար. և պարտէզին

վրայ նայող փոքրիկ սենեակը՝ Սրբազանին սիրելական անկիւնը՝ թափուր ու պարապ կը մնար։ Որքան յիշատակներ այդ անկիւնին մէջ ուր սովոր էինք բազմած տեսնելու պատկառելի եկեղեցականը, լսելու իր համով—հոտով խօսակցութիւնը, իր փորձառական կեանքի տեսութիւնները, որոնք մեր հին աւանդապահ եկեղեցականներու ստուերազիծը կը կենդանացնէին կարծես, — հոգեւորականներու անհետացող սերունդի մը իբրեւ վերջին ու մեծարելի տիպարներէն մէկը։

Հանգիստ իր հոգւոյն։

Երկու այժմէութիւններ, մէկը զուարթ, նուազահանդէս մը, ու միւսը տխուր՝ յարգելի կղերականի մը մահը, տարօրինակ զուգադիպութեամբ մը եկան ընդգրկեցին զիրար, այս միեւնոյն էջերուն մէջ զոր սոսկաբար Գրական Նշմարներու կը նուիրէինք։ Դժբաղդաբար, մեր զրական կեանքն ալ, — զոր պէտք չէ չփոթել լրագրութեան հէ ի հէ առօրեայ կեանքին հետ, — այնքան մեծ պէտքսութիւն մը չընծայեր, որ զոհողութիւն մը ըրած ըլլանք՝ անոր տեղ զբաղեցնող գեղարուեստական նիւթով մը ու մահադոյժով մը որոնք այնքան սերտիւ կապուած են մեր հանրային կեանքին հետ, բարեգործական ու հոգեւորական։

Մ Յ Ն Շ Ա Ղ Ն Ե Ր

— ուսում —

Վերջալոյսի աղջիկն է իր կուսութեան մէջ քրքում,
Ինչո՞ւ մինակ մընացի երազիս հետ թախծագին,
Թմբիներու բոյրին տակ, նուէրներու ծաղիկին՝
Ահ, ինչո՞ւ ես մընացի գիրկն երազին այս արտում։

Ո՛վ դուն հիրիկ ծաղկանոյշ, երբ անցար հետ լոյսերուն,
Բան մը փրլաւ հոգւոյս մէջ՝ քայքայումով ողբագին,
Դարձիդ քիչ մըն ալ ժպտէ՝ սա լուսաբաղձ հիւանդին
Որ քիչ առ քիչ կը մեռնի՝ կառչած իր խօլ յոյսերուն։

Մութը կ'իջնէ հոգւոյս՝ ուր վաղուց գիշեր է արդէն,
Ըսպասումի՛ ցայգ՝ ուր դեռ չըողաց լոյսն երազին,
Հազիւ քիչ մը բոյր ծրծած մոռացումին ես վարդէն,
Նորէն քեզի՛ կը դառնամ, ա՛կն արեւիս ոսկեծին։

Լուսնի պայծառ տիւրն տակ պիտի համրե՛մ անդադար
Բուստէ զարկերն ոգեւոր՝ առոյգ սիրոյ երազին,
Ահ, քիչ մը լոյս, ժպտի՛տ մը՝ որ կեանք ինծի պիտի տար,
Փարատելով Լըքումն որ կը ծանրանայ իմ ուսին։

Եկո՛ւր, արդէն կը մըսին հէք երազներն եմ որբուկ,
Ա՛լ յոգնած եմ անցնելէն կածաններէ մենաւոր,
Անձրեւ կ'իջնէ հոգւոյս՝ մէջ, կըղգամ տակաւ սրբըփուկ,
Գիրկս է պարապ մընացեր դատարկին մէջ սըգաւոր։

ՄԻՍԱԲ ՄԵՄԱՐԵՆՑ



A. Mme Elise E.

Սա ֆանթէզի էմբոմբթիւէն՝ Շորէնին,
Պախին ֆիւկէն չա՛տ ոստոստուն ու աղուոր,
Շամինատի Լա Մօրէնայէն խորին
Չորս ձայներով միւզիք մըն է թեւաւոր:

Անուններուն է՛ն թովիչն է, տե՛ս... Էլի՛զ...
Անմահութեան խոստում մըն է կարծես ան.
Թիթեռնիկներ՝ չորս հատ՝ թեւով ոսկերիզ,
Որոնք անդու հողիւս շուրջ կը դառնան:

Անաշին գիրն աստուածային շունչ մ՛ունի,
Տիրի՛ջ համար, ամէն մարդ ալ կ'ըսէ... Էն.
Անիւթացած էութիւն մը խնկումի,
Որուն առջև այնքան ազգեր կ'աղօթեն:

Երկրորդ գիրով կըսկսին. Լաց, Լուսթիւն,
Լազուարթ ու Լոյս, Լեւակ ու Լանջք ձիւնաթոյր,
Բաղեր անգայտ, գաղափարով թրթռուն,
Լուսինն ցոլքով չաղուում յորդ ու անդոյր:

Երրորդ գիրը Իմաստութիւն կը բուրէ.
Իրանն անոր՝ զոր կը պաշտես մեկուսի,
Իղձերն ամբողջ, — պղպըջակներ փրփուրէ, —
Ու անթափանց Իոիսն «Ի»ով կըսկսի:

Չմուռս, Չմրուխտ, և Չգլխանք ու Չանակ,
Չգայութեան Չարթնումը պիրկ քերթողին,
Օ՛հ, ամէնքն ալ չորրորդ գիրովը՝ համակ
կը կայծկտան լոյսերուն պէս կանթեղին:

Սա ֆանթէզի էմբոմբթիւէն՝ Շորէնին,
Պախին ֆիւկէն չա՛տ ոստոստուն ու աղուոր,
Շամինատի Լա Մօրէնայէն խորին
Չորս ձայներով միւզիք մըն է թեւաւոր:

Անուններուն է՛ն թովիչն է, տե՛ս... Էլի՛զ...
Անմահութեան խոստում մըն է կարծես ան.
Թիթեռնիկներ՝ չորս հատ՝ թեւով ոսկերիզ,
Որոնք անդու հողիւս շուրջ կը դառնան:

ԻՆՁՊԵՍ ԿԸ ԴԱՍԱԻՈՐՈՒԻՒՆ

ՏԸ ԿՕՆԳՈՒՌՆԵՐՈՒ ԵՐԿԵՐԸ

(Գ. ԵՒ Վ. ԵՐԶԻՆ ՅՕԴՈՒԱՆ)

Նախորդ երկու յօդուածներովս խօսեցայ որ Կօնգուռ եղբարց երկերուն ընդհանուր և արտաքին հանգամանացը վրայ: Կ'արժէ որ քիչ մը աւելի սեղմմամբ քննութեան չրջանակը:

Շատ քննասէրներ զբաղած են անոնց ոճին խնդրով և անոնց մէջ գլխաւորաբար նշանակելի են Բօլ Պուռժէի և Ժիւլ Լըմէթուռ ուսումնասիրութիւնները՝ որոնք առաջնորդներ եղան ներկայ գրութեանս: Ներշնչուած եմ նաև Կօնգուռներու վէպէն, Դաուլ Տրմալի մեռումը, որ կը պարունակէ հեղինակներուն հաւատոյ դաւանութիւնները՝ լեզուի և ոճի մասին:

Բօլ Պուռժէ կըսէ. — «Անոնց ներսիդին կըսկսէր կատարուիլ ազդեցութիւն մը, այսինքն գեղարուեստի առարկայից (պատկեր, արձան, փորագրութիւն) ազդեցութիւնը՝ գրականութեան վրայ: Այս ազդեցութեան առաջին ստեղծեցին վէպի մասնաւոր ձև մը, որ կարող կըլլայ արտայայտել, ոչ մէկ ձևէ աւելի լաւ, արդի մարդուն բարոյական հիւանդութիւնները, և, այս ձևով վէպը գրելու համար, հնարեցին և կիրարկեցին տեսակ մը ոճ: Այս ոճը այնքան բոլորովին նոր է որ՝ իրենց ժամանակակից ամէնէն ձեռնհաս դատողներն անգամ զարմացան: Այս ոճը դեռ իբր պատրուակ կը ծառայէ այն ամէն կատարի առարկութեանց՝ զոր իրենց հակառակորդները կ'ուղղեն Կօնգուռներու դէմ: Բայց մարդ չի կրնար ուրանալ թէ այդ ոճն ունի իր գոյութեան իրաւունքը մեր սերնդին պատկանող անհատներուն ամէնէն բոլուն պէտքերէն մէկ քանիններուն մէջ, քանի որ բազմաթիւ արձակագիրներ, և իրարմէ այնքան տարբեր արձակագիրներ, ընդունած են այդ ոճին սկզբունքը:»

Այս նոր ոճին յատկանշական բազմաթի-

կողմերէն մէկն է՝ կատարեալ արհամարհանք ներդասեակութեան: Կօնգուռները բնաւ հոգ չեն ըներ գրելու ոչ դա՛ն ոճ մը և ոչ իսկ նեղաստի ոճ մը: Անխնամ թողլով ներդաշնակութեան մասը, արդէն բաւական կը տարբերին նախորդ բոլոր գրողներէն, մասնաւոր դասականներէն՝ որոնք յանձն կ'առնեն ուրիշ շատ պակասութիւններ, բայց բնաւ չեն զոհեր ներդաշնակութիւնը: Բոլոր դասական հեղինակները, բոլոր վիպականները, կը սիրեն նուագը, երգը, երաժշտութիւնը, ականջի փափուկ ու նուրբ գգուանքը, երբեմն փողհարութիւնն ու թմբկի գոռումը, և այս խաղերով կը պարծենան: Ներդաշնակութեան մենամուտութիւնն այնքան առաջ կը տանին որ, պարագային համեմատ, նմանեցուցեալ ներդաշնակութիւն մըն ալ կը չինեն, հովին շունչը, թնդանօթին պայթիւնը, օձին սուլելը, խարտոցին խարտիւնը, առուակին մրմունջը և ուղիւն շառաջը: «Դնդեն դարբնոց գողաւորը» — կըսէ Բագրատունի — կամ «Ճողիւնի ջուրսն հանէին»:

Հակառակը, Կօնգուռներու ժամանակակից երկու գլխաւոր արձակագիրները, Ֆլօպէտ և Թ. Կօթիէ, յետին աստիճանի խնամք կը տանէին ներդաշնակութեան: Կօնգուռներէ առաջ, բոլոր «ոճի տէր» գրողները խոյս կուտային բառերու կրկնութիւններէ, չարածայնութենէ (cacophonie), Ֆռագի չինուածքին մէջ ընդմիջումներէ, և կը գրէին ականջի համար: Մինչդեռ, տը Կօնգուռ եղբարք կը գրեն աչքի համար, տեսութեան համար: «Ասոնք ալ «ոճի տէր» են — կըսէ Լըմէթուռ — բայց բնաւ ուրիշներուն կերպովը «ոճի տէր» չեն: Կ'արհամարհեն ինչ որ ոճի մէջ ուղղակի չծառայեր տեսնել տալու կամ զգալ տալու»:

Այլուր, դարձեալ կըսէ Լըմէթուռ. — «Ասոնցմէ դուրս ունեցածնին է՝ անարգանք մը Ֆռագիին նկատմամբ, արհամարհանք մը տեսակ տեսակ կանոններու նկատմամբ՝ ինչպէս քաջաձայնութիւն (euphonie), դաշնաւորութիւն (cadence), յորինուածք (construction), մասնաւորաբար Մաքեթ և Մաքամ փեռվեգի վէպերուն մէջ: Անոնց միակ ու

հշմարիտ հոգն է՝ նկարել. իսկ Ֆռագո ինք-
նին կ'երթայ կրցածին չափ: Անոնց անձանթ
են քերականներու խղճահարութիւնները:
... Անոնց պարբերութիւններէն չատերը,
եթէ դատուին դասական հռետորութեան
ամէնէն ընդունելի կանոններուն համաձայն,
խիստ գէշ չինուած են, չունին ոչ ներդաշ-
նակութիւն, ոչ յարդարում»:

Արդարեւ, բանանք Քոյր Ֆիլոմէն վէպը,
և առաջին պարբերութիւնը զոր պիտի կար-
դանք, հիւանդանոցի սրահին սա նկարագ-
րութիւնն է. La salle est haute et vaste.
Elle est longue et se prolonge dans une
ombre où elle s'enfonce sans finir: Դաշնա-
ւորութիւն և ներդաշնակութիւնը բոլորովին
արհամարհուած են հոս: Տեսէ՛ք, ձայնի ամէն
մէկ կեցողածքին կը պատահի սա տգեղ օնի
կրկնութիւնը՝ որ խիստ անախօթ է, ինչպէս
longue, prolonge, ombre, s'enfonce: Դաշ-
ղիացի ո՛ր դասական հեղինակը այսպէս պիտի
գրէր: Սակայն և այնպէս, իբր լոյսի և շուքի
խաղ, իբր հեռանկար, իբր պատկեր կամ
աչքի պատրանք, սքանչելի նկարագրութիւն
մըն է: Կօնգուռները նկարիչներ են. և երբ
իրենց աչքը կը զբաղի առարկայով մը, երբ
իրենց տեսութիւնը կ'իյնայ տեսաբանի մը
վրայ, իրենց լսողութիւնը կը դադրի, իրենց
ալանջները չեն գործեր: Վերջապէս, ներ-
դաշնակութեան սիրահար չեն, երաժիշտ չեն,
ոչ ալ քնարերգականեր Ռասինի, Լամարթինի,
Իւկոյի պէս:

Տեսնել, դիտել, ահա՛ իրենց կարողու-
թեանց զօրաւորագոյնը: Բան մը չվերաբեր
իրենց տեսութեան: Մասօն—(այս անուան
տակ ծածկուած կը խօսի Թէօֆիլ Կօթիէ Le
Monde des arts անուն թերթին խմբագ-
րատան մէջ, տես Շառլ Տրմայեթ, էջ 84)—
կըսէ. «Շատ մարդիկ չեն տեսներ: Օրինակի
համար, հոսկէ անցնող անձանց քսանըհինգ
հոգիին միջէն, երկու հոգի չկայ որ տեսնէ
պատին թուղթին գոյնը: Ահա ձեզի Պլան-
շառը որ կը մտնէ: Դիտե՛ք որ պիտի չանդ-
րադառնայ թէ արդեօք սա սեղանը կ'ընէ՞
թէ քառակուսի...: Երբեք չեն խառած իմ
բուն արժէքիս վրայ. իմ արժէքս այն է որ

ես մարդ մըն եմ՝ որուն աչքին առջև գո-
յութիւն ունի տեսանելի աշխարհը» (pour qui
le monde visible existe):

Դալով դաշնաւորութեան խնդրոյն, հայ
դասական հեղինակներու գլխաւորները, մա-
նաւանդ եկեղեցւոյ աղօթքներու մեծ հեղի-
նակները խնամք տարած են իրենց գրուա-
ծոց մէջ «դաշն ու հեղասահ» գնացք մը
դնելու: Կ'արժէ կարդալ, այս մասին, հրա-
հանգիչ յօդուած մը զոր 1873ին հրատարա-
կած է Հ. Երզ. Հիւմիւզ՝ գրելով ԹԱՐԳ.
ՄԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ խորագրով տեսու-
թիւններ, որոնցմէ կրնայ մարդ շատ օգ-
տուիլ: Իւրաքանչիւր լեզուի յատուկ ոճին
և ասացուածոց վրայ խօսելէ վերջ, կ'անցնի
ներդաշնակութեան—(կամ լաւ եւս դաշնա-
ւորութեան)—յայտնելով թէ «արձակ շա-
րագրութեան մէջ ոտք մը կայ—(կենթադ-
րուի cadence)—որ ալանջը միայն կը զգայ,
խօսքով բացատրելը շատ դժուար է: Տեղ
կայ որ կարճ բառ պէտք կը լլայ, տեղ ալ
կայ որ բազմավանկ բառ»: Յետոյ, այլուր,
կ'աւելցնէ. «Չեմ ուզեր ըսել որ արձակ շա-
րագրութեան տեղ՝ ոտանաւոր գրենք, բայց
վարպետ շարագրութեան մէջ ասանկ տողեր
կը ձեւանան ամէն լեզուի մէջ, ինչպէս
Ֆինէլձոնին գրուածոց, մանաւանդ «Տեկեմա-
ք»ին մէջ խիստ շատ ասանկ ոտանաւոր տո-
ղեր կան, ըստ գաղղիական տաղաչափու-
թեան. ասոր համար, վարպետ շարագրու-
թեան մը բառերուն կարգն ալ որ փոխեա,
նոյն անուշութիւնը չի մնար»:

Եւ մենք կրնանք դիտել այս սկզբուն-
քին հաւատարիմ կիրարկութիւնը Տելեմաքին
չիւրմիւղեան թարգմանութեանը առաջին
տողերէն սկսեալ, օրինակի համար.—«Կա-
լիբօէ—կայր ի սուգ—անմըխիթար, և—չա-
րաբաստիկ—առ վշտին—թուէր նմա ան-
մահութիւն».— Այս քաջ հայկաբանը կը
յայտնէ պարզմտութեամբ թէ «գրողին մըտ-
քէն չանցնիր որ մէջը ոտանաւոր տողեր
դնէ. բայց ալանջի անուշութեան—(լաւ եւս
դաշնաւորութեան) միայն փոյթ ընողին
գրչէն՝ ինքնին կ'ըլլեն այս տողերը»:

Մեր արդի հրապարակագիրները հակա-

առթիւն կը գործեն յամառութեամբ պնդելով թէ Կոնգրուսեան ոճը «դաշն է ու հեղատան»։ Այսպէս վճռելու համար, պէտք է որ մարդ կամովին անգիտանալ ուղէ նոյն իսկ իր տոհմային լեզուին պայմանները, դասական հեղինակաց կերպը, եկեղեցւոյ հարց անդատին տարած խնամքը և սէրը՝ դաշնաւորութեան։

Դիտուած և յայտնի բան է թէ հայ եկեղեցական մատենագրաց մեծ մասը նշանակելի հեղածութիւն ունեցած է ականջի։ Այդ մատենագրութեամբ կիրթ անձանց ներելի չէր որ «դաշն ու հեղատան» գտնէին Կոնգրուսեան ոճը՝ որ բոլորովին ու բացարձակօրէն զուրկ է այս երաժշտական յատկութենէն։ Հակառակը պնդելու համար, մարդ նմանելու է կոյրի մը՝ որ կը յաւակնի գոյներու վրայ վիճիլ։

Ինչ իրաւունքով մարդ կրնայ դաշնութիւն պահանջել Կոնգրուսեան կերպով յորինուած նկարագրութենէ մը որ հետեւեալն է, բաղմթիւ էջերէն հատ մը.

— «Պզտիկ ամպեր կը խաղային և կը գլորէին հորիզոնին վրայ, մանիշակադոյն, գորշ, արծաթեայ ամպեր, իրենց դադաթին վրայ ճերմակի փայլատակումներով՝ որոնք կարծես երկնքին ստորոտը կը փոխադրէին ծովերուն եղերքի փրփուրը։ Հոնկէ կը բարձրանար երկինքը, անհուն և կապոյտ, խորունկ և պայծառ, չքեղ, և արդէն նուազուն, նման այն ժամուն՝ ուր լուսատուները կրկնօրէն վառիլ օրուան լոյսին ետեւէն։ Բոլորովին բարձրը, երկու կամ երեք ամպեր տարածուած կը կենային, հաստատուն, անշարժ, կախուած։ Անհուն լոյս մը կը հոսէր լուրին վրայ, կը քնանար հոս, կ'առկայձէր հոն, նաւերուն չուքին մէջ կը դողդղացնէր արծաթեայ պաղպաղուն կերպաններ, կը զարնուէր կայմի մը, ղեկի մը գլխուն, կը հանդպէր լուսացարար կնկան մը նարնջագոյն թալկինակին կամ վարդագոյն տառատոկին»։ — (Դեռամաս Միգալոբաբ, տես էջ 15)։ — Այլուր (էջ 232), «Զանգակիկ մը հնչեց, ստիպիլ, թրթռաձայն, յատակ։ Պ. Մօքուէն կարծեց թէ իր մարմնոյն մէջ կը հնչեցնէին։

Յանկարծական դող մը մինչև անոր մատերուն ծայրը հասցուց կարծես մեղուի խաթութեամբ մը։ Գնաց դէպի դուռը»։ — Ահա՛ երկու օրինակներ, առաջինը՝ աչքի և ականութեան, լոյսի և գոյնի, վերջապէս նկարչութեան, երկրորդը՝ տպաւորութեան, զգացման, զգայնութեան։ Այս կրկին օրինակներուն մէջ միթէ չկայ Կոնգրուսեան արուեստին, կերպին, ոճին հաւատարիմ ու բուն զգացողութիւնը՝ (sensation) զոր կը կարծեմ յաջողութեամբ արտայայտած ըլլալ։ պահելով իմաստներու յստակութիւնը, գաղափարաց ճշգրտութիւնը, բառերու ճշգրտութիւնը, թէև քիչ մը հեռանալով մեր սովորական Ֆուգի շինութեան կերպէն։ Հ. Երդ. Հիւրմիւզ մը պիտի կարենար հարկաւ կատարեալ գոհացում տալ աւանդական հայկաբանաց խիստ և յաճախ տարօրինակ պահանջմանց։ Բայց, յայտնի է որ այդ պահանջմանց համապատասխան Հիւրմիւզեան ոճով գրուելիք թարգմանութիւն մը՝ որ Պօղ եւ Վերգիլի կամ Տելլուսի ոճով կատարուած թարգմանութիւն մը ըլլար՝ Ռեքե Մօքուէնի յարմարցուած, դժբաղդաբար զուրկ պիտի մնար Կոնգրուսեան յատկանշող դրոյմէն, և պիտի դասուէր Հոմերոսի Իլիականին այն թարգմանութեան կարգը՝ զոր կատարեց Տիկին Տասիէ, Լուի ԺԴ. դարուն մաքուր, անարատ, բարեկիրթ և ազնուական, վայելուչ և հանդիսաւոր գաղղիներէնովը՝ զոր ճարտարութեամբ վարեցին Գոնէշլլ, Ռասին, Պօսիէ, այլ ոչ Մօլիէր, ոչ Լա Ֆօնթէն։ Ոչ ոք կը կարդայ, այսօր, Տիկին Տասիէի և ոչ իսկ Պիթօպէի Հոմերոսը և ամէն մարդ կը նախընտրէ Լ. Ռօնթ տը Լիլինը։ Ինչո՞ւ։ Որովհետեւ ամբողջ խնդիրը կը դառնայ ոճին շուրջ։

Զբաւեր, թարգմանութեան մը մէջ, բնագիրը հասկնալ և զայն ուղիղ վերածել թարգմանչին լեզուին, չբաւեր բառին դէմ բառ չարել, քովէ քով, ինչպէս կը չարեն սալայատակի մը քարերը. այլ այս նիւթական գործողութիւններէն աւելի վեր, աւելի յարգի, գերագոյն բան մը կայ, այդ ալ է արտայայտել հեղինակին կերպը, մարմնանալ անոր հետ, և անոր զգեստը զգեստել։ Գի-

տալ անոր այն յատկութիւնները զոր հեղինակը չունի. չի գրկել հեղինակը իր բարեմասնութիւններէն. այլ դուրս հանել անկէ ընդհանուր տպաւորութիւն մը՝ որ հակառակ չըլլայ իրականին, հեղինակին բուն նկարագրին և անոր արտայայտման «բնածին և ինքնուրոյն» ձեւից, կերպից, ոճից. Այս արտայայտումն է որ կը կոչուի՝ զգացողութիւն (sensation):

Օրինակի համար, Մօլիէն կը վարէր աշխոյժ, յորդեռանդն, համարձակ, զուարճալի, լաւ յօրինուած, լաւ դարձուած, լաւ նկարուած տաղաչափութիւն մը. Լա Յօնթէն ունէր, մանրամասնութեանց մէջ, միամիտ և Կալիական կատարելութիւն մը. Գօսնէյի Յրագը ջղապինդ և զօրեղ է, լայն յօդաւորութիւններով, զեղուն կենդանութեամբ մը ձեւաւորուած. Ռասինի ոճը նոյն գիծերը կը պատկերացնէ՝ Ռաֆայէլի պէս, պարկեշտ, ներդաշնակ և ամօթխած գիծեր, ինչպէս Ռաֆայէլինը. Յէնէլսօն, որուն արձակը այնքան քաղցրանուագ է և այնքան պայծառ, Ռասինի իրեն քոյր եղող ոճին չափ: Պօսիւէի պարբերութիւնները փառաւոր գնացք ունին, Պօւալօ չափաւոր և լուրջ է, հիանալի գունաւորութեամբ՝ ի հարկին. Բասզալ ինքնահնար և չափազիտական ձեւովը՝ միշտ կը գործածէ յատուկ բառը բուն տեղին. Վօլթէն ունի իր ոճը՝ որ է ջինջ, հաստատուն, անքակտելի, Դաւիթի և Փիլիսոփայական Բառաբանին բերեղեայ արձակը: Այսպէս թուելով իւրաքանչիւր մեծ հեղինակի ինքնայատկութիւնը, Վիքթօր Իւկօ, իր 1834ի յառաջաբանին մէջ, կ'եզրակացնէ սապէս.

«Վերցուցէ՛ք այս բոլոր մեծ մարդերէն այդ պարզ և պղտիկ բանը, այսինքն՝ ոճը, և ի՞նչ պիտի մնայ Վօլթէնէն, Բասզալէն, Պուալօյէն, Պօսիւէէն, Յէնէլսօնէն, Ռասինէն, Գօսնէյէն, Լա Յօնթէնէն, Մօլիէնէն, Ի՞նչ պիտի մնայ այս վարպետներէն: Նոյն բանը որ մեզի կը մնայ Հոմերոսէն՝ Պիթօպէի ձեռքէն անցնելէ վերջ»:

Արդ, վերցուցէ՛ք նաև Կօնգուռներուն ջղուտ, խիտ, անդամահատուած, արտակարգ ոճը և պճնեցէ՛ք զայն այն բոլոր աւելորդ

զարդարանքներով զորս իրենք չունին, որոնք իրենցը չեն, այսինքն, «դաշխաւորութիւն, ներդաշնակութիւն, ականջի փայփայանք», գրիտէք ի՞նչ կը մնայ: Կը մնայ այն Կօնգուռը՝ որ պիտի մնար, եթէ ես զայն թարգմանած ըլլայի այն ամեն բարի խրատներուն համաձայն որոնք այնքան բարեմտութեամբ, այնքան վեհանձնութեամբ, այնքան ազնուականութեամբ ինձ կը չափուին ա. միսէ մը ի վեր: Նախամեծար պիտի սեպէի կոտրել գրիչս և չգործել այդպիսի սրբապղծութիւն մը: Ո՛չ Մագդաղիմէ, ո՛չ Ա. զաւցի, ո՛չ Բիչչիօլա, ո՛չ Խօսեցեալ, ո՛չ Պօլ Վիքթիմէ, ասոնց և ոչ մէկուն ոճը չէր կրնար օրինակ ծառայել ինձ՝ խնդրոյ նիւթ եղած աշխատութեանս մէջ, ուրկէ յորդառատ կը զեղուն Կօնգուռեան նկարագրին արտայայտութիւնն ու զգացողութիւնը:

Առաջին մը գրեց. — Այն որ կարդացած է Դեռահաս Միջակորեաք իր Փրանսերէնագրին մէջ, զուր կը փնտռէ այն երաժշտութիւնը (!), դաշն (!) և հեղասահ (!) նկարագրութիւնները... »:

Երկրորդ մը հաստատեց այդ վճիռը և աւելցուց. — «Եթէ ոճի վարպետ ենթադրուած հեղինակի մը պարբերութիւնները «դաշն և հեղասահ» չըլլան, ինչո՞ւ Զօլա այդ դատաստանը ընէր Կօնգուռներու մասին... և տալաւ Մալխաս կը պնդէ թէ Կօնգուռներու ոճը «դաշն և հեղասահ» չէ... »: — Այսքանը չէր բաւեր, և զիս այսքան անիրաւութեամբ քննողն է որ կրկին սխալ մըն ալ կը գործէ՝ իրարու հետ չփոթելով ներդաշնակութիւնը (harmonie) Զօլայի խօսած նուագակցութեան (symphonie) հետ:

Երրորդ մը, առանց ջրելու վերի առարկութիւնները, անուղղակի հաւանութիւն տուաւ անոնց, և արտաւ անորոշութիւն մը սփռեց խնդրոյ վրայ. «Զգայնութեան խտացում, ձայներու համերգութիւն, բառերու հնչունութիւն և ներդաշնակութիւն, (!) ասոնց մէջ Կօնգուռները միւլպէտէ տեւի անդին տարին իրենց մտահոգութիւնը... »:

Հասկցա՛ք, միւլպէտէ անդին... :

Սակայն և այնպէս, ծուռ նստինք, հոգ

չէ՛, բայց չիտակ խօսինք։ Լեռներ կը բաժնեն Կօնգուռները՝ Յլօպէռէ, ներդաշնակութեան մասին։ Շաթօպօրանի, Լամաթինի, Յլօպէռի ներդաշնակութիւնը ճւր... Կօնգուռներու բառերուն հնչունութիւնը ճւր... :

— «Պիրէոնն ալ կը ճանչնաք հարկա՛ւ, տեսնուելու պատիւն ունեցած էք։

— Ի՞նչ ըսել է, ամէն օր, արդէն բարեկամս է»։

Շատ մարդիկ կան որ հաւատարմութիւն մը անունը՝ մարդու անուան տեղ կ'առնեն, ամէն բանի մէջ կը նետուին, ամէն բանի վրայ կը խօսին, բայց բան մը տեսած չեն։ (Լա Յօնթէն)։

Որին մեծարանօք։

Դ. Բ. ՄԱՆԼԵՍ

ՅԻՇԱՏԱԿԻ ԷՋԵՐ

ՈՆԻՐԱԿԱՆ ԵՐԱՁ

R. GOATLYԻՃ.

Այն պահերուն ուր մնաք—բարովի չիկնոտ վերջալոյս մը կը տառապի չիջամերձ հորիզոնին ծոցը, հոգին ալ երազողին կըսկօի անձկալ ու հիւանդոտ խոհեր՝ տերեւներու պէս աշնանի կը թափին յուսահատ տրտմութեան մը հովին փշուրին տակ և որոնք կը ծփան միայնութեան մը մէջ որ երեկոյեան ցուրտէն կը սարսռայ։

Ու սենեակին չորս պատերը կըսկսին ճնշել ու ծանրանալ գանկին վրայ անոր որ լուսամուտէն կը հետեւի լոյսին յետին ցոլքերուն որոնք յուսահատ հաճակեղութեամբ մը կ'երթան խառնուիլ ստուերներուն հետ որոնք յամրաբար կ'առաջանան։

Երազներու հեռուոր ճամբաներէ, ծաղիկներու համբոյրներուն հեշտանքովը օծուած երեկոյեան զեփիւռին շունչը կը ծաւալի օդին մէջ, ու գիշերը որ կուգայ՝ լուսազարդ կապոյտին տակ անրջայոյզ ծաղիկներուն հետ, դարերու մեծ յանկերգը՝ որ վա-

յելքէն վերջը կուգայ՝ ունայնին մեծ խորհուրդը կը համերգէ։

Ու այդ պահերուն է որ դարձեալ անյուսութեան լեզուն անուշ կուգայ ու արցունքի մեղմաշունչ երգը խողարձագանգ մը կուտայ քարայրի մէջ խոր սրտերուն մէջ ծառաահիւժ՝ որ լուսութենէ, մենութենէ դժկամ՝ անձանձրոյթ գորով ու սէր կ'երազեն կարօտագին... :

Շարաթ մըն էր այնքան ուրախ, այնքան երջանիկ էի որ՝ թշուառութեան գաղափարը կորսնցուցէր էի կատարելապէս, երբ իրիկուն մը, աշնան տխուր իրիկուն մը, բաց պատահանիս առջև նստած կ'երազէի, կ'երազէի սիրելիներու վրայ որոնցմէ հեռու էի, եւ որոնք ի զո՛ւր պիտի ուզէի տեսնել, ի զո՛ւր պիտի ուզէի լսել անոնց ձայնը, միայնութիւնը սակայն կը սարսէր հոգիս, կարօտը կը կրծէր ներսիդիս։ Կարօտը ո՛հ, մինչեւ երբ ո՛վ գիտէ այդ կարօտը, թերեւս տարիներ, թերեւս ցմահ... :

Ի՞նչ տառապանք սրտի մը համար որ կըզգայ... :

Կը խորհէի վերջապէս այն խնամօք մըթնորոտին վրայ, ուրկէ անչափ հեռու էի. կը խորհէի նօզեհի կեանքիս վրայ, ու մինչ այսպէս նախզգայուած տրտմութեան մը ալիքներուն մէջ կը տարուբերէի, ուշադրութիւնս յանկարծ ցրուեցաւ աղմուկէն քայլափոխի մը որ կը մօտենար։

Թղթաբերն էր. ինձի համար ծրար մ'ուսէր հասցէիս հասած։

Տենդոտ ձեռքերով ըացի ծրարը։ Ի՞նչ անակնկալ։ Իր լուսանկարն էր. ան հէք տղուն որուն մտերմութիւնը վայելած էի Հէրն—Հիլ նստած ատենս։ Եւ սակայն ես զինքը մոռցած էի, ու բաւական ամիսներ անցեր էին առանց երկտող մը իսկ փոխանակելու. ան տրտում համակերպութեամբ մը ո՛վ գիտէ որքան սպասեր էր նամակներու, խեղճ տղան... Իմ այս անտարբերութիւնս կը խղճահարէր զիս ու խղճահարութիւնս ա՛լ աւելի սաստկացաւ երբ կարդացի այն տողերը զորս Կողղոջ ձեռքով մը գրէր էր ան լուսանկարին կռնակը։

երգէ՛ ու երգիդ՝ արձագանգը պիտի պատասխանէ .
Հառաչէ ու հառաչդ կը կորսուի օդին մէջ .
Երջանիկ ես ու մարդիկ կը փնտռեն զքեզ ,
Վշտաբեկ՝ կը դառնան ու կերթան :
Երջանկութիւնդ կ'ուզեն լիարժեք վայելել ,
Բայց չեն ուզեր ցաւդ կիսել . . . :

ՇԵՅՔՍԻՐ

Այս անակնկալը ուժգին հարուած մը եղաւ սրտիս : Աչքերուն պաղատանքը, դէմքին հիւժուամը, երկար մազերը որոնք իր բանաստեղծի սիրուն գլուխը կը ծածկէին ու տառապանքի արցունքը որ կը կաթէր ամբողջ մարմինէն , այս բոլորը այնքան յուզեցին զիս որ այն գիշերը չկրցայ բոպէ մը գոցել աչքերս :

Չէի կրնար քնանալ : Չէ՛ մի որ քունն անգամ արցունքը չսիրեր ու միշտ կերթայ թառիլ այն աչքերուն ուր այդ ցաւի կաթիլները չեն լճանար :

Սքանչելի լուսնկայ գիշեր մը դուրսը .
պարտէզ իջայ , բնութիւնը անոյ՜ խաղաղութեամբ մը կը քնանար : Ծառերն անգամ կարծես կը ձանձրանային :

Ի զո՛ւր թափառեցայ ածուէ ածու , ծաղիկէ ծաղիկ՝ սրտիս ծանրութիւնը թեթեւցնելու համար : Իր յուետեսի նայուածքը որուն մէջ հոգիին ամբողջ տառապանքը խտացած էր և ուր ցաւը իր սեւ աղօսները ձգեր էր՝ կը հալածէր զիս անխնայ :

Կը յիշէի այն գիշերները յորում մենաւոր կը չըջէինք թե թեւի՛ , կուրծք կուրծքի՛ , իրարու խառնելով մեր յոյսերն ու տրտմութիւնը , մեր սուգն ու արտասուքը :

Շուրջս ամէն ինչ յիշատակ մը կ'արթնցնէր մէջս ու տերեւի սօսափիւն մը սրտիս մէջ արձագանգ մը :

Ցուրտ սարսուռներ կը ծալուէին անշարժութեան մը մէջ որ զիս կը պատէր :

Ու կը մտածէի թէ առջի օրը երջանիկ էի տակաւին . . . :

Պսոյտի աղւոր ընկեր մըն էր եղած ինծի :

Շատ իրիկուն երբ քիչ մը կանուխ կը վերադառնայի գիւղ՝ դաշտերը վայելելու մտադրութեամբ , իրմէ յարմար ընկեր մը՝ որ ինծի պէս սիրահար մը ըլլար բնութեան այդ աննիւթական գեղեցկութիւններուն՝ չէի կրնար դռնել : Կըսպասէր ինծի , գիտէր գալիք իրիկուններս ու կընդունէր զիս միեւնոյն սիրուն ու համակիր ժպիտով , արտում ժպիտ մը , բալիթաչի չինձու ժպիտ մը որու ետին ցաւերը անխղճօրէն կ'աղօսեն հոգին ու հեծեծանքներ կը խեղդուին կուրծքին տակ , սիրտը յօշոտելով :

Բանաստեղծօրէն արտում ու երազկոտ հոգի մըն էր ինք . երկար ժամանակ սակայն չպատմեց ան ինծի իր տրտմութեան , յաւատենական վշտին պատմութիւնը . իր սուգին վրայէն որ ամբողջ հոգին թունաւորեր էր , չվերցուց վարագոյրը : Ու ամէն անգամ որ բարեկամութեան , սիրոյ ու գորովի վրայ կը խօսէի , ան հեգնող ժպիտով մը ինծի կը նայէր , ժպիտ մը որ կը չարչարէր զիս ու անհանգիստ կընէր :

Ու գրեթէ միշտ գիտնալով հանդերձ որ տառապանքի անյուսութեան լեզուն իրեն միայն հաճելի էր , գիտնալով հանդերձ որ արցունքներուն երգը միայն կը խօսէր իր ցաւոտ հոգւոյն մենաւոր աչքերուն , իրեն զուարթ նիւթերու վրայ կը խօսէի , երջանկութեան վրայ , յոյսերու վրայ ու բոլոր այն վարդապոյն երազներուս վրայ որոնց իրականացումին համար կը տառապէի : Երջանիկ տառապանք սակայն . . . :

Սակայն ինչո՞ւ այսքան եսասիրութիւն , չէ՛ մի որ երջանկութեան արտայայտութիւնը աւելի դառն պիտի գործէր իր արցունքներուն վրայ : Գիտէի՛ , գիտէի ասոնք , բայց չէի ուզեր տրտմութեան բոցը արծարծել ներսիդին՝ խօսելով լալկան նիւթերու վրայ . կուղէի միտքը զբաղեցնել վայրկեան մը մոռցնելու համար այն վէրքը որ հո՛ն էր , կուրծքին տակ , որ կ'արիւնէր , կ'արիւնէր :

Սակայն գիշեր մը , ամառայնի աղւոր գիշեր մը դարձեալ , երբ կը պտտէինք թե թեւի , աւելի մտերմօրէն սեղմուած իրարու :

վերջը որ կը հասուննար կուրծքին տակ, յանկարծ պայթեցաւ ու երկար, խորունկ լացէ մը վերջ չնշահատ ձայնով մը ըսաւ.

— «Ես առաջ զինքը ունէի միայն բարեկամ ու միմիայն զինքը. իմ ըմբռնած բարեկամութիւնս եղբայրութիւն մըն էր աւելի քան թէ բարեկամութիւն մը, անանկ որ ես կը կարծէի թէ մեր այս մտերմութիւնը պիտի չարունակուէր ցմահ: Որքան սխալեր եմ սակայն իմ ըմբռնումիս մէջ: Երբ ստիպուեցայ իրմէ հեռու ապրիլ քիչ մը առնել, երբ քանի մը ամիս վերջ զինքը նորէն տեսայ, ա՛լ ամէն բան լմնցած էր արդէն: Մնաց բարով մտերմութիւն, մնաց բարով եղբայրութիւն, մնաց բարով երազ օրեր. անիկա իրեն համար ուրիշ մտերիմներ, ուրիշ եղբայրներ գտեր էր արդէն... »

Զբարկացայ եղածին վրայ, որովհետեւ թերեւ յանցանք չունէր, պէտք եղած նկարագիրը ու փորձառութիւնը չունէր թերեւ, ըմբռնելու բարեկամի մը յարգը, եղբօր պէս մտերիմի մը արժէքը:

Ան մոռցաւ զիս, բայց ես չկրցայ զինքը մոռնալ, որովհետեւ չէի կրնար: Եթէ սրտիս մէջ բաժին մը յատկացուցի ու եւ մէկու մը համար, ա՛լ այդ բաժինը իրենն էր ցկեանս: Ահա թէ ինչո՛ւ համար բարեկամ չեմ ուզեր լինել ու չա՛տ ղգուշաւոր եմ մտերիմներու ընտրութեան մէջ, որովհետեւ եթէ անգամ մը սիրտս տամ, ա՛լ այդ ցկեանս է»:

Միամիտ տղայ...

Ինքն ալ ինծի պէս անձաձրոյթ գորովի սիրոյ կարօտը ունի եղբր, ծարաւը սրտին մէջ, ծարաւ մը որ կ'այրէ, կարօտ մը որ կը հիւժէ. ինքն ալ սիրոյ այդ անիրական երազովը տառապեր էր:

Ինքն ալ տառապեր էր չղտնելուն համար զինքը հասկցող հոգի մը, որ իրեն ամէն նիւթականութենէ ու աշխարհիկ ամէն ստօրին նկատուեցնէր զերծ սէր մը տար: Բայց ինչ որ է՛ն շատ զինքը կը դառնացնէր, այն ալ այն յուսախաբութիւնն էր որ զինքը գտորներ էր անվերջ յոռետեսութեան մը մէջ:

Բայց եթէ աշխարհի վրայ յոռետես մը աւելցեր էր, գէթ իրապէս բարի հոգի մը

վերադարձներ էր. չէ՞ մի որ վշտահարները միշտ բարի սիրտ մը կ'ունենան: Ո՛հ, ցաւը ամոքող ձեռք մըն ալ աւելցեր էր, արցունքի վրայ ծռող ճակատ մըն ալ պսակուեր էր:

Ու ողջագութեանք զիրար չի մոռնալու խոստումով ու երկար համայններէ վերջ շողեկաւ մտայ՝ խցիկէս դիտելու համար զինքը որ կ'անյայտանար մութին մէջ, տառապանքի ստուերին պէս: Այն օրը յորում բաղքը կը քակէր մեր ձեռքերը, երբեք չխորհեցայ թէ՛ թերեւ վերջին մնաց—բարովս էր որ կըսէի ու վերջին համայններս որ կուտայի իր չրթներուն: Որովհետեւ վերադարձէս շատ քիչ վերջն էր որ իր մահը իմացայ:

... Կեանքով ու սիրով լեցուն արուեստագէտի ու բանաստեղծի սիրուն գլուխը, քսաներկու գարուններու ծաղիկներէն հիւսուած աղւոր հասակը՝ իր սիրոյ անիրական երազին հետ կը հանգչի այսօր լուռ ու մենաւոր անշուք հողակոյտի մը ծոցը, հեռո՛ւն, հեռո՛ւն մշուշոտ, արտում երկիրքի մը տակ:

ՀԱՍՏ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ԲԱՐԵԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պօղոս փաշա Նուպար 500 ոսկիի գումար մը դրեր է Եգիպտոսի Ազգ. Առաջնորդարանին տրամադրութեան ներքեւ, աղքատաց բաշխուելու համար, իր ողբացեալ մօր՝ Տիկին Ֆուլիկ Նուպար փայայի յիշատակին:

*** Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան անդամ Տօքթ. Թորգոմեան էֆ.ի առաջարկութեամբ, այրի Տիկին Աննիկ Մ. Սմբատեան 200 ոսկի նուիրեր է՝ Հիւանդանոցի նորալէն դեղարանին ներքին կազմաներուն ու պէտքերուն համար:

*** Հնդկաստանի մէջ վաճառականութեամբ զբաղող բնիկ Ջուղայեցի աղա Յովսէփ Պօղոսեան, որ մեռաւ վերջերս, իր կենդանութեանը 38,000 ոսկիի մօտ գումար մը յանձնած է եղբր Հնդկաստանի կառավարութեան, տարուէ տարի տոկոսը բաժնուելու համար Նոր Ջուղայի մէջ իր անունով հիմնելի հիւանդանոցին, և Պուշիրի, Շիրազի զանազան բարեգործական ու եկեղեցական աղգ. հաստատութեանց:

ՖՐԱՆՍԱՅԵՆ ԴԵՊԻ ՊՐԱԶԻԼԻԱ

(ՏՈՐԲ. ԼԵՈՐՈՂ ՔԱՐԱՆԻ ՅԵՇԱՏԱԿՆԵՐԸ)

Նոյն իրիկունը, երբ ծանուցին մեզ թէ յաջորդ օրը Սէն-Վէնսան պիտի հասնինք, իր սիրոյն հաւատարիմ Մառին նոր նամակ մը տուաւ ինծի՝ թղթատարին յանձնելու համար, անգամ մըն ալ չնորհակալ ըլլալով որ իր այս գաղտնի թղթակցութեանց մասին բան մը յայտնած չէի պառնին։

Եւ իբր թէ այս մանրիկ ողբերգութիւնները բաւական չըլլային, նոյն իրիկունը հանդիսատես եղանք պառնին և պառնուհիին կարճատե մէկ վէճին։ Տիկինը մտադրութիւն յայտնած էր օրը օրին նօթագրել իր տպաւորութիւնները՝ նիւթ հայթայթելու համար ուղեւորական գրքի մը գոր պիտի հրատարակէր յառաջիկային և որ, իր կարծիքով, հետաքրքրութեամբ պիտի կարդացուէր ազնուապետական շրջանակներու մէջ։ Նոյն իսկ եթէ այսօր իսկ Տիկին Մէնէլլի(*) ուղէ գործադրութեան դնել այդ խորհուրդը, իր ճամբորդութեան պատմութիւնը չահեկանութենէ զուրկ չպիտի ըլլայ։ Բայց այդ իրիկունը, պառնը հաշտ վերաբերում մը չունեցաւ իր սիրասուն կէսին հետ՝ այս գաղափարին նկատմամբ և անսովոր խստութեամբ մը հրաւիրեց զայն՝ հրաժարիլ իր գրական փառասիրութիւններէն։ Տիկին Մէնէլլի, —որուն «կեանքը երազ մըն է» վերնագրով խեղճ մէկ ձեռագիրը գտնուած է ետքէն Բարիդի իր բնակարանը խուզարկուած պահուն, ժամացոյցի մը դարակին տակէն, —այդ գիշերը իր խցիկը քաշուեցաւ

թողլով որ իր ընդդիմախօսը առանձին ճաշէ, եթէ գիտցած ըլլար որ իր ազնուատում կարծուած ամուսինը ուրիշ մէկը չէր՝ բայց եթէ ժան կալէյը որ «Ինքնաշարժ կառքերը՝ աշխարհիկ մարդոց գործածութեան համար» անունով տետրակ մը հրատարակէր ատենօք, անշուշտ պիտի հարցնէր անոր թիւնչ իրաւունքով իրեն մենաշնորհ ընել կուզէ հատորը 3¹/₂ ֆրանքնոց գլուխ - գործոց ներ գրելու պատիւը. բայց չէր գիտեր։

Թաշորդ օրը, որ տասնըչորսերորդն էր մեր ճամբորդութեան, կատարեալ համոզում գոյացուցի թէ Պ. աը կռավալ բաղդախնդրին մէկն էր։

Ձախորդ փոթորիկէ մը ետքը, որ յապաղեցուց մեր ժամանումը, Քաթարինան վերջապէս կանդ առաւ Սէն - Վէնսանի (կանանկ Հրուանդան) առջև։

Ժամանակը այնքան ուշ չէր որ նաւահանգստի պաշտօնեաները չգային նաւը այցելել։ Ուստի, հաղիւ խարխիւ նետած էինք երբ Մաքսատան և Քարանթինայի պաշտօնեաները չողենաւ կ'ելլէին։ Անոնց ժամանումը այնքան արագ եղած էր որ պառնը սրահէն լսելով բարձր ձայներ, հաւանաբար կարծեց թէ վիճաբանութիւն մը տեղի կուներար որուն առարկան ինքն էր։

Եւ երբ ես հանդարտ քայլերով կը յառաջանայի՝ երթալ առողջապահական յատարարութիւններս ընելու, տեսայ որ յանկարծ պառնը դէպի իմ կողմս վազեց, անկիւն մը քեց տարաւ դիս, և ջղաքրքուած ու ծայրայեղօրէն դուռնատ չլմորած նայուածք ներ ուղղեց դէպի նաւուն յետսակողմը։

—Ո՛վ եմ այս մարդիկը, ըսաւ, ինչ ընելու եկեր եմ նաւուն մէջ. գացէք հասկցէք խնդրեմ, ես չեմ կրնար։

Ծ. Խ. — Ինչպէս օրաթեթերը հաղորդեցին ասկէ առաջ մանրամասնաբար, Տիկին Մէնէլլի անպարտ արձակուած է դատարանի վճռով, և դերասանութիւն կ'ընէ Բարիդի երկրորդական բեմերէն մէկուն վրայ,

Խօսքը ընդհատելով, յայտնեցի իրեն նորեկներուն հանգամանքը և քիչ մը հանգարտեցաւ։ Եւ սակայն իր թաքստոցէն չելաւ՝ մինչև պաշտօնեաները բերող նաւակին մեկնումը, և երբ ժամ մը ետքը վերստին տեսայ զինքը, աչքերը տակաւին կը կրէին այդ խեղայեղութեան հետքը։ Այլևս համոզուած էի կասկածներուս վրայ։

Այս օրագրութիւնս չպիտի ծանրաբեռնեմ մանրամասնութիւններով ու խորհրդածութիւններով՝ Սէն—Վէնսան անցուցած մեր ժամանակամիջոցին վրայ որ կարճատև ու անշանկ եղաւ։ Ծշմարիտը ըսելու համար, նոր հողի մը վրայ ոտք դնելու հետաքրքրութիւնս ինչ որ ալ ըլլար ինծի համար, այստեղ մտքի բոլորովին տարբեր տրամադրութեան մը մէջ էի Լաո—Բալմասի մէջ ունեցած տրամադրութենէս։ Հոն, խօլ փափագ մը ունէի զուարթութեան. այստեղ, բոլորովին պաղարիւն մնալ կուզէի, ինքնամիտփութելու համար այն տպաւորութեանց մէջ զորս քանի մը ժամ առաջ կրած էի չոգենաւին մէջ։ Ուստի, անուշադիր աչքով մը դիտեցի Սէն—Վէնսանը. իմ ուշադրութիւնս սեւեռած կը մնար Քաթարիմայի կամ մըրջակին վրայ, Պ. տը Կոսովալի շարժումէն բուն և արարքներուն յառած։

Ինչո՞ւ իսկոյն ձերբակալել չի տուիր զինքը, ըսեն թերեւս ինձ։ Պիտի պատասխանեմ թէ ատիկայ իմ գործս չէր, թէ իմ կասկածս ենթադրութիւն մըն էր դեռ և թէ իմ դատաստանս կարծիք մըն էր միայն. կըզգուշանայի ձախորդ քայլ մը առնելէ և այս խնդրոյն մէջ նախապատիւ կը սեպէի իմ անձնական հանգիստս չխանգարել։

Ուստի չոգենաւ վերադարձայ որ վերջապէս լաւագոյն էր քան Սէն—Վէնսանը, և աւելի՝ ապահով։ Մնաց որ, հոն գործ մը ունէի կատարելիք. այն է՝ դեղարանս մաքրել։ Ինչ որ ալ ըլլար Պ. տը Կոսովալ, պատուաւոր ընտանիքի զաւակ մը զոր ծնողքը կը հալածէր կամ թէ բաղդախնդիր մը, այդ շղագրգիռ մարդուն տրամադրութեան ներքեւ չէի կրնար թողուլ կարգ մը զօրաւոր

դեղեր զորս կրնար չարաչար գործածել ի հարկին։ Ուստի, ամէնքը մէկանց ծրար մը ընելով՝ ծով նետեցի և անոր ճողփիւնը լսելէս ետքը միայն՝ թեթեւցած սրտով գտայ ինքզինքս և սիկառէթ մը շինեցի։

Այդ միջոցին շատ հեռու ըլլալու չէինք Սէնդ—Էլէնէ, —այն պզտիկ կղզին որ մեծն Նաբոլէոնի ածիւնները կը պարունակէ։ Նաւաստի մը իմացուց ինծի թէ այդ նշանաւոր եղբերէն պիտի անցնէինք, բայց անկարելի էր ընդունարել՝ նոյն իսկ է՛ն զօրաւոր դիտակով։ Այս պատրանքէս սփոփուելու լաւագոյն միջոցը սեպեցի սրան իջնելով՝ դաշնակին առջև անցնիլ և Բուլքինի գեղեցիկ մէկ կտորը զարնել ու երգել։

—Ի՞նչ է այդ երգածնիդ, ըսաւ ձայն մը ետեւէս, շա՛տ աղուոր եղանակ մըն է։

Ետիս դարձայ և տեսայ որ Պ. տը Կոսովալն էր։

—Ի՞մ երկրիս երգերէն մէկն է՝ Նաբոլէոնի վրայ։

Պառոնը կրկնել տուաւ և ինքն ալ ընօկերացաւ ինձ այս անգամ։

Խօսքերը չէր հասկնար, վասն զի ֆրանսօսերէն չէի երգեր, բայց եղանակը զինքը տակնուվրայ ըրաւ բոլորովին. ինծի անանկ եկաւ որ աչքերուն մէջ արցունք կար։ Յետոյ, դէպի նաւուն կողմը առաջացաւ եւ ծովը դիտեց տրամօրէն, իբր թէ իր դժբաղդ ճակատագիրը ընդունարէր անհունութեանը մէջ։

Այդ օրը, մեր խօսակցութիւնը կարճ եղաւ։ Պառոնը գանգատեցաւ նաւապետին խստութենէն։ Եւ խնդրեց ինձմէ, իբրեւ շնորհք մը, որ այլեւս սեղանակից չըլլամ այդ պաղարիւն մարդուն, ինչպէս եղած էի բացառաբար։

Բնաւորութեան տարօրինակ փոփոխակաւ նութեամբ մը, սակայն, ժան տը Կոսովալ հաստութեան մէջ պիտի գտնուէր, իսկոյն։ Հաղիւ օր մը անցած էր, որ նաւապետ Նիւթըն Քօուիսի յայտարարեց թէ շատ գոհ էր ճամբորդութենէն եւ թէ հաճոյք կըզգար անոր նման փորձառու անձի մը առաջնորդութեամբ շարունակելով իր ուղեւորութիւնը։

(Շարունակելի)

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՅՅ ՄԸ ՍԵՆԿԵՐ ԸՆԿ. ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ

Չորրորդ անգամ ըլլալով, Սինկէր Ընկերութիւնը կազմակերպած է իր կարի մեքենաներու նրբարուեստ արտադրութեանց տարեկան Յուլիանդէսը, նախորդներէն գերազանցապէս աւելի՝ ճոխ ու աւելի՝ շահեկան, մասնագէտներուն համար մանաւանդ։ Երկու շաբաթէ ի վեր, այդ Ընկերութեան կեդր. Տնօրէնութեան ընդարձակ շէնքին սրահները (Բերա, Պօն-Մաուշի դէմ) ժամադրավայր դարձած են երկսեռ այցելուներու, ամէն ազգէ, ո՛չ միայն հարուստ դասակարգին՝ որուն համար հաճելի ժամանց մըն է արդէն երթալ տեսնել հոն պարզուած դիւթական տեսարանը, այլ նաեւ միջակ դասակարգի ընտանիքներու, — կիներ ու աղջիկներ որոնք այլապէս կը հետաքրքրուին, իրենք իսկ գործածող ըլլալով Սինկէրի մեքենաներուն, կա՛մ առտնին պէտքերու համար և կա՛մ իբր բանւորուհի։ Այնպէս որ, այս Յուլիանդէսը, հակառակ իր ճոխ արտադրութիւններուն ու պերճանքի առարկաներուն, — միշտ նոյն մեքենաներով պատրաստուած, — high-lifeին միայն յատուկ չէ, և ասեղնագործի բոլոր ճիւղերուն վերաբերեալ ուսումնասիրութեանց առիթ կընծայէ ամէնուն, օգտակարապէս։

Այցելուն նախ կ'առաջնորդուի առաջին սրահը ուր կը տեսնէ գեղարուեստական փափուկ արտադրութիւններ, ընտիր թալլօներ և այլն, այնքան զմայելի կերպով պատրաստուած որ դժուարը կուգայ հաւտալու թէ իրօ՛ք կարի պարզ մեքենայէ՞ մը ելած են անոնք. և սակայն այս պատրանքը չուտով կը փարատի իրականութեան առջև։ Սինկէր Ընկերութեա՛յ, յաճախորդուհիներն են որ պատրաստած են զանոնք, անոր մեքենաներուն վրայ, և իւրաքանչիւրը իր անունը կրող քառթ մը կցած է իր ասեղնակարին։ Սինկէրի յաջորդական ցուցահանդէսները այնքա՛ն ողեւորութիւն առաջ

բերած են գեղեցիկ սեռին մէջ, որ բազմաթիւ տիկիներ ու օրիորդներ անօրինակ եռանդով մը ինքզինքնին առած են մեքենայով ասեղնագործելու ճիւղին և այսօր յաջողապէս կը մրցին Ընկերութեան վարպետ ուսուցչուհիներուն արտադրութեանց հետ, ինչպէս կը տեսնուի այդ առաջին սրահին ցուցադրումներէն։ Այս իրողութիւնը ինքնի ի վեր կը հանէ, անգամ մըն ալ, սա պարագան թէ այս Յուլիանդէսներուն գեղեցիկ արդիւնքներէն մէկն ալ եղած է կարի մեքենայով ասեղնագործելու եռանդը արծարծել, թէ՛ հաճոյքի համար և թէ՛ իրեն ապրուստի յիշոց։ Վերջինին վրայ կուգնէ ծանրանալ մասնաւորապէս, այս էջերուն մէջ, վասն զի պզտիկ թիւ մը չեն կազմէ այսօր այն հայ կիներն ու աղջիկները որոնք մեքենայով ասեղնագործութիւնը իրենց համար ասպարէզ ընտրած են, այդ համեստ ու ճաշակաւոր աշխատութեամբ դրամ շահելով։ Նոյն իսկ դպրոցական հասուկ աշակերտուհիները, որոնք կը պատրաստուին կեանքի ասպարէզը թեւակոխելու, — է՛նքա՛ն ընտանիքի զաւակներ ընդհանրապէս, — պիտի կրնան օգտուիլ հիմակուց՝ Սինկէրեան Յուլիանդէսը այցելելով, մօտէն տեսնելու համար կարի մեքենաներուն ընծայած պէտքերով ինքները ու գեղատեսիլ արտադրութիւնները։ Այնտեղ, զննութեան առարկաներ կան իրենց համար, թէ՛ զարգացնելու իրենց գեղարուեստական ճաշակը ու ընդունակութիւնը, և թէ՛ մօտաւոր ասպարէսի մէջ իրենց ձեռնարկելիք ասեղնագործութեան մասին ընտրութիւննին կատարելու։

Նկարագրութիւն մը, որքան ալ մանրամասն, դժուարաւ պիտի կրնար հարազատ գաղափար մը տալ այն շքեղ Յուլիանդէսին վրայ, և լաւագոյն բանը զոր կրնան ընել ամէն անոնք որ կը հետաքրքրուին

անով ու զեռ առիթը չեն ունեցած տեսնելու, երթալ այցելելն է, զոր ջերմապէս կը յանձնարարենք, մանաւանդ մեր ընթերցողուհիներուն:

Միւս չորս սրահներուն մէջ ցուցադրուած ասեղնանկարները ո՛չ նուազ եզական հրապոյր մը ունին՝ երանգներու բնականութեամբ, գործուածքի նրբութեամբ, ու կնոջական ճաշակի տեսակէտով: Բնութեան տեսարանները, ծառերը, ծաղիկները այնքան ճշգրիտ կերպով պատկերացուած են անոնց մէջ, որ կարծես տաղանդաւոր նկարչի մը վրձինը կենդանութիւն տուած է անոնց: Դեղեցկին ու գեղարուեստին սիրահարները, երկարօրէն կանգ կառնեն այդ ասեղնանկարներուն առջև, կարծիքներ փոխանակելով, գնահատումներ յայտնելով. ուրիշներ կը հետաքրքրուին բուն իսկ աշխատութեան եղանակը տեսնելու և յարակից խցիկները կը մտնեն ուր Ընկերութեան կարուհիները, մեքենաներուն առջև նստած, ուշադիր նայուածքով ու անխոնջ մատներով շարժման մէջ դնելով ասեղը որ կ'ըլեւելէ, կը յառաջանայ կտաւին վրայ՝ կարծես տեսակ մը մոգականութեամբ գրողներով անոր վրայ՝ դէմը դրուած նկարը, գունագեղ ու սիրուն:

Սինկէրի Տնօրէնութիւնը իր այս Յուլիանդէսներուն կազմակերպութեան գաղափարն յղանալով ու գործադրելով, առիթ ընծայեց հասարակութեան՝ ընտելանալու իր կարի մեքենաներու այն յատկութեանց որով անոնցմով ասեղնանկարչութեան հրաշակերտներ կ'արտադրուին: Այս ընտելացումը չորս տարիէ ի վեր յարաճուն կերպով զարգացաւ, յառաջդիմեց ու ծաւալեցաւ նաև մեր կնոջական շրջանակներուն մէջ, և տարակոյս չիկայ որ ներկայ Յուլիանդէսը աւելի պիտի նպաստէ սոյն օգտաշատ արդիւնքին: Արդէն իսկ առօրեայ այցելուներու բազմութիւնը պերճախօս արտայայտութիւն մըն է սոյն գնահատման. բարձրատիճան պաշտօնատարներ, դեսպանական մարմնոյ անդամներ, արուեստագէտներ, գրագէտներ, տիկիւններ և օրիորդներ, և ժողովրդեան ամէն դասակարգերն անխտիր իրենց հիացական

տպաւորութիւնը կը կրեն հոն, և անոնք որ տակաւին չեն փութացած՝ անշուշտ պիտի ուզեն օգտուիլ այս եղական առիթէն, որ աչքը կը հմայէ, միտքը կը պարտէ, գեղարուեստին հետ խորհիլ տալով միանգամայն կեանքի նիւթական պայմաններու մէկ կարեւոր տարրին, — ասեղնագործութեան վրայ:

Ելիք: Վերնագրով բանաստեղծութիւնը, զոր հրատարակած ենք ներկայ թիւով, շաբաթներ առաջ շրկուած էր Խաչագործութեան՝ մեր համակրելի աշխատակից Մ. Ա. Պարսամեանի կողմէ որ կերևայ թէ՛ անոր հրատարակման յապաղման պատճառաւ՝ մէկ օրինակն ալ շրկեր է Արեւ. Մամուլին որուն ապրիլ 12ի թիւին մէջ տպուած տեսանք այդ միեւնոյն ոտանաւորը, վերջին պահուն, երբ Մասիսը մամուլին կը յանձնուէր: Այս հակիրճ բացատրութիւնը հարկ սեպեցինք, կարծեցնել չի տալու համար թէ օրը օրին արտատպում մը ըրած ենք մեր Իզմիրի պաշտօնակիցն:

Մնաց որ, անպատեհութիւն մը չենք տեսներ այս զուգադիպութեան մէջ. որ աւելի շատ թիւով ընթերցողներ ունենալու առիթ պիտի ընծայէ այդ սիրուն բանաստեղծութեան:

ԵՐՈՒՍԱԴԵՄԻ հաշիւներու քննիչ Յանձնաժողովը Ս. Պատրիարք Հօր կողմէ հրաւիրուած է նիստ գումարել յառաջիկայ երեքշաբթի, Դաւաթիոյ Խորհրդարանը:

ԱՐՄԱՇԷՆ եկող վարդապետներն ու սարկաւազները այսօր Դպրեմանք կը վերադառնան: Ասոնցմէ Պսակ Վրդ. թէև կարին պիտի շրկուէր, սակայն առաջնորդ Տ. Զաւէն Մ. Վրդ. ին ի մօտոյ Կ. Պոլիս գալու պատրաստուելուն վրայ, ոյս որոշումը յետաձգուեցաւ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Օրաթերթերը ընդարձակ մանրամասնութիւններ կը հրատարակեն Սան - Ֆրանչիսքոյի կործանման վրայ՝ ահուկի երկրաշարժի մը հետեւանքով։ Շահեկանութենէ զուրկ չէ, այս առթիւ, յիշեցնել ամերիկեան այդ հոյակապ քաղաքին հիմնարկութեան պատմութիւնը։ Սան - Ֆրանչիսկո շատ համեստ սկզբնաւորութիւն մը ունեցած է, 1776ին հիմնուելով Մէքսիկացիներուն կողմէ որոնք այդ թնտեսականին կը գրաւէին Բալիֆօռնիան։ 1846ին՝ հազին 200 բնակիչ ունեցող գիւղ մըն էր որ իր չրջականերով, ամբողջ դաւառը, Միացեալ Նահանգներուն անցաւ։ Մէկ տարիէն պակաս ժամանակամիջոցի մը մէջ, միեւնոյն տեղին վրայ գեղեցիկ քաղաք մը կը բարձրանար որուն արտածման ու ներածման գումարը կէս միլիոն տոլարի կը հասնէր արդէն 1847ին։ Յաջորդ տարին, Սիէռա - Նէվադաի ստորոտը ռսկահանքեր կը գտնուէին և ահագին բաղմութիւն կը խուժէր դէպի այն կողմ։ Գործաւորներու աւուրչէքները աներեւակայելի կերպով սկսան բարձրանալ, մինչև ժամը մէկ տոլարի, և հողերուն գինը որ կանգունը 65 սանդիմ էր՝ քանի մը տարուան մէջ բարձրացաւ 692 ֆրանքի։ Բաղաքը, որուն շէնքերը ամբողջովին եղեւին փայտէ շինուած էին, գունաւոր աղիւններով պատուած, երկու տարուան մէջ հինգ անգամ մեծամեծ աւերումներ կրեց հրդեհներէ ու վերականգնուեցաւ, բայց երկրաշարժի աւերում կրած չէր քնաւ։

— Ֆրանսացի նշանաւոր գիտնականը, Պ. Բիւռի, որ շատ մը կարեւոր գիւտեր ըրած է, նախորդ շարթուն կառքի արկածի մը զոհ գնաց ու սրտաճմլիկ մահով մը կնքեց իր արդիւնաւոր կեանքը։ Ինքն էր որ գտած էր «Ռատիոմ»ը և կարեւոր ուսումնասիրութիւններ հրատարակած՝ Ռէօնթիէնեան ճառագայթներուն, ջեոուցական ալիքներու, «քուարձ»ին վրայ, Նօպէլի մրցանակը ստանալով իր կնոջ հետ որ մասնակից էր իր աշխատութեանց։ Ամերիկացիները ատեն մը 500,000 ֆր. առաջարկեցին իրեն, իր գտած «Ռատիոմ»էն շատ փոքր քանակութեամբ մը գնելու համար, բայց Պ. Բիւռի մերժեց և այդ հազուադիւրո նիւթը ինքզինքին պահեց իր հետազօտութիւնները շարունակելու նախանձախնդրութեամբ։ Երկու տարի առաջ,

Մասիսի մէջ, գիտական աշխատակից մը ձեռնհասօրէն գրած էր «Ռատիոմ»ին վրայ որ, այն ատեն, գիտական աշխարհին համար է՛ն կարեւոր այժմութիւնն էր։ Անկէ ի վեր, Պ. Բիւռի առաջ կը տանէր իր ուսումնասիրութիւնները, օգտակար դառնալով մարդկութեան։ Այս մեծ գիտնականը անցեալ հինգշաբթի առտու Բարիդի փողոցներէն մէկէն անցած պահուն, կառքի մը տակ մնալով, գանկը փչրուեցաւ. մահը վայրկեանական եղաւ։

ՆՇԱՆԱՆՈՍԱՌՈՒԻՒՆ

Հաճոյքով կ'արձանագրենք նշանախօսութիւնը Օր. Թագուհի Մալէճանեանի՝ Լեւոն էֆ. Փափազեանի հետ, որ կատարուեր է Իզմիրի մէջ։ Փափազեան էֆ. Իզմիր—Գասապայի երկաթուղոյ ընկերութեան վարչութեան մէջ քարտուղարի պաշտօն ունի, և ուսեալ ու ազնիւ երիտասարդ մըն է. իսկ իր խօսեցեալը՝ Օր. Թագուհի ազնիւ ձիրքերով օժտուած ու ընտանեկան բարւոք կրթութիւն ստացած աղջիկ մը, դուստրն է կարապետ էֆ. Մալէճանեանի, Պոլսոյ գրեթէ բոլոր աղգ. թերթերուն ինչպէս նաեւ Մասիսի գործակալը Իզմիրի մէջ ուր իր ուղղամիտ գործունէութեամբ մեծապէս օգտակար դարձած է միշտ մեր մամուլին։ Այս բերկրալի առթիւ, մեր խնդակցութիւնները կ'ուղղենք Մալէճանեան եւ Փափազեան ընտանիքներուն։

ԳԻ. Հ. ԳԱՆՈՒՍՏԵԱՆ

Գ Ե Ր Ս Ե Մ Ա Ն Ի

Ընտիր հաւաքածոյ մը կրօնային բանաստեղծութիւններու։—Գին 6 շրշ։

Կեդրոնատեղին է Կ. Պոլիս, Յ. Մաթէոսեան Թղթալաճառանոցը, Ֆինճանճըլար Եօքուչու, Թիւ 27։—Կը գտնուի նաեւ Պ. Պալենց գրատունը, Չաքմաճըրլար, Թիւ 21։ Եւ հեղինակին քով, ի Թարսուս, Տարսոն Գօլէճ։

2—10

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տէր Է. ՏՃՕՐԷՃ—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐՄԻՆԵԼԻՔ Օրագրի



8-10



三



ASSOCIATED BUREAU



CONFIDENTIAL

REPORT OF THE BUREAU

1. The purpose of this report is to provide a summary of the activities of the Bureau during the year 1941. The report is divided into two main sections: a general summary of the Bureau's work and a detailed account of the activities of the various divisions. The general summary is contained in the first section, and the detailed account is contained in the second section. The report is intended for the use of the Bureau's management and the public.


REPORT OF THE BUREAU



2. The Bureau's activities during the year 1941 were characterized by a high degree of efficiency and effectiveness. The Bureau's management was able to coordinate the activities of the various divisions and to ensure that the Bureau's work was carried out in a timely and efficient manner. The Bureau's activities were also characterized by a high degree of flexibility and adaptability. The Bureau was able to respond quickly to changes in the situation and to adjust its activities accordingly.

3. The Bureau's activities during the year 1941 were also characterized by a high degree of cooperation and collaboration. The Bureau's management was able to coordinate the activities of the various divisions and to ensure that the Bureau's work was carried out in a timely and efficient manner. The Bureau's activities were also characterized by a high degree of flexibility and adaptability. The Bureau was able to respond quickly to changes in the situation and to adjust its activities accordingly.

4. The Bureau's activities during the year 1941 were also characterized by a high degree of cooperation and collaboration. The Bureau's management was able to coordinate the activities of the various divisions and to ensure that the Bureau's work was carried out in a timely and efficient manner. The Bureau's activities were also characterized by a high degree of flexibility and adaptability. The Bureau was able to respond quickly to changes in the situation and to adjust its activities accordingly.



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարժ մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սենելու, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անմիջ ղժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Բ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռ Բի, ուսի ու ուսի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՍԻՆԿԵՐԻ
ՄԱՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին՝
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԿԻՏԱՐ

Զարը Պոյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երախաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդուլուի տունը։

8 — 1

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ դուռ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարմանէ սառնաքոժ, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, շղարին տկարութիւնները, հիւն եւ նոր դաշիւկան ախտերը։ Այս վերջին ախտերը՝ առանց սառնաքոժի խոնգարման եւ նորազոյժ մեթոտներով կը բուժէ կտրճ միջոցի մէջ։

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը Զօրեքլարթի օրերը միայն ձրի։ 8 — 10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Արտնոց եւ կանանց ճշգրիտաբար հագնեցնելու, Պօլիս, Սուլթան—Համամ, Մի. Երկր Դարձառան դէմ թիւ 58։

Սոյն վաճառատան մէջ գտնուած աղբանքները, արտնոց ու կանանց յատուկ հագնեցնելու, իրենց գեղեցկութեան կը միացնեն ազատութիւն, եւ դիւրամասշտկելի գիւնեւու առուելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան։

Աղամ վարդեան մեծապէս գով թողուցած է իր բազմաթիւ յաճութիւնները, 5 — 10